

Հարցաշար

Քաղաքացիական ծառայության մասին Հայաստանի Հանրապետության
օրենսդրության բնագավառի
(Քաղաքացիական ծառայության առաջատար թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող
մրցույթի համար)

Հարց 1

Ո՞րն է համարվում քաղաքացիական ծառայության պաշտոն՝

- Քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված պաշտոնը:

(«ՔԾՄ» ՀՀ օրենք, հոդված 3)

Հարց 2

Նշվածներից ո՞ր մարմնում քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց վրա է տարածվում «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքը՝

- ՀՀ կառավարության աշխատակազմում:

(«ՔԾՄ» ՀՀ օրենք, հոդված 4)

Հարց 3

Ինչպե՞ս են կարգավորվում քաղաքացիական ծառայողների միջև ծառայողական փոխհարաբերությունները՝

- Օրենսդրությամբ սահմանված աշխատանքային կարգապահական ներքին կանոններով:

(«ՔԾՄ» ՀՀ օրենք, հոդված 6)

Հարց 4

Նշվածներից ո՞րն է համարվում քաղաքացիական ծառայության պաշտոնների խումբ՝

- Քաղաքացիական ծառայության առաջատար պաշտոններ:

(«ՔԾՄ» ՀՀ օրենք, հոդված 7)

Հարց 5

Քաղաքացիական ծառայության բարձրագույն պաշտոնների խմբի ո՞ր ենթախումբն է ամենացածր ենթախումբը՝

- 2-րդ ենթախումբը:

(«ՔԾՄ» ՀՀ օրենք, հոդված 7)

Հարց 6

ՀՀ նախարարության աշխատակազմում ո՞վ է շնորհում ՀՀ քաղաքացիական ծառայության 2-րդ դասի խորհրդականի դասային աստիճանները՝

- ՀՀ նախարարը:

(«ՔԾՄ» ՀՀ օրենք, հոդված 8)

Հարց 7

Ո՞վ է շնորհում ՀՀ քաղաքացիական ծառայության 1-ին, 2-րդ և 3-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճանները՝

- Աշխատակազմի ղեկավարը:

(«ՔԾՄ» ՀՀ օրենք, հոդված 8)

Հարց 8

Նշվածներից ո՞ր հիմքով պաշտոնից ազատվելու դեպքում է քաղաքացիական ծառայողը զրկվում քաղաքացիական ծառայության դասային աստիճանից՝

- ՀՀ քաղաքացիությունը դադարեցնելու:

(«ՔԾՄ» ՀՀ օրենք, հոդված 8)

Հարց 9

ՀՀ կառավարության աշխատակազմում ո՞վ է հաստատում (փոփոխում) քաղաքացիական ծառայության առաջատար պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողների պաշտոնների անձնագրերը՝

- ՀՀ վարչապետը՝ ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի համաձայնությամբ:

(«ՔԾՄ» ՀՀ օրենք, հոդված 9)

Հարց 10

Նշվածներից ո՞վ իրավունք չունի զբաղեցնել քաղաքացիական ծառայության պաշտոն՝

- Այն անձը, ով խուսափել է ժամկետային զինվորական ծառայությունից:

(«ՔԾՄ» ՀՀ օրենք, հոդված 12)

Հարց 11

Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն առաջանալու դեպքում աշխատակազմի ղեկավարն այդ մասին ի՞նչ ժամկետում պետք է տեղեկացնի քաղաքացիական ծառայության խորհրդին՝

- 3-օրյա:

(«ՔԾՄ» ՀՀ օրենք, հոդված 13)

Հարց 12

Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը ե՞րբ պետք է հրապարակվի՝

- Մրցույթն անցկացնելուց ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ:

(«ՔԾՄ» ՀՀ օրենք, հոդված 14)

Հարց 13

Նշվածներից ո՞ր դեպքում անձին չի թույլատրվում մասնակցելու քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթին՝

- Երբ նա ՀՀ քաղաքացի չէ:

(«ՔԾՄ» ՀՀ օրենք, հոդված 11)

Հարց 14

Նշվածներից ո՞ր հիմքով է մրցույթը համարվում չկայացած՝

- Եթե մրցույթին մասնակցելու համար ոչ մի դիմում չի ներկայացվել:

(«ՔԾՄ» ՀՀ օրենք, հոդված 14)

Հարց 15

Քաղաքացիական ծառայության առաջատար թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովը նշվածներից ո՞ր հիմքով քաղաքացուն չի թույլատրում մասնակցել մրցույթին՝

- Եթե նա դատական կարգով ճանաչվել է սահմանափակ գործունակ:

(«ՔԾՄ» ՀՀ օրենք, հոդված 12)

Հարց 16

Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգի խախտմամբ ՀՀ մարզպետարանների աշխատակազմերի քաղաքացիական ծառայության գլխավոր պաշտոնների 1-ին ենթախմբի թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացված մրցույթն ո՞վ է անվավեր ճանաչում՝

- Դատարանը:

(«ՔԾՄ» ՀՀ օրենք, հոդված 14)

Հարց 17

Ի՞նչ ժամկետով է պաշտոնավարում քաղաքացիական ծառայության առաջատար պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողը՝

- Անփոփոխելի է, պաշտոնավարում է մինչև օրենքով սահմանված առավելագույն տարիքը լրանալը:

(«ՔԾՄ» ՀՀ օրենք, հոդված 34)

Հարց 18

Ո՞վ է ՀՀ կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմնի աշխատակազմի քաղաքացիական ծառայության կրտսեր պաշտոններում օրենքով սահմանված կարգով նշանակումներ կատարում՝

- Աշխատակազմի ղեկավարը:

(«ՔԾՄ» ՀՀ օրենք, հոդված 15)

Հարց 19

Քաղաքացիական ծառայության պաշտոն առաջին անգամ զբաղեցնող անձը մինչև քանի՞ ամիս փորձաշրջանով է պաշտոնի նշանակվում՝

- Վեց ամիս:

(«ՔԾՄ» ՀՀ օրենք, հոդված 15)

Հարց 20

Նշվածներից ո՞րն է քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու առանձնահատուկ դեպքը՝

- «Դիվանագիտական ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և դեպքերում գործուղված դիվանագետների կողմից՝ ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի համաձայնությամբ, քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելը:

(«ՔԾՄ» ՀՀ օրենք, հոդված 15՝)

Հարց 21

Նշվածներից որպես սահմանափակում ի՞նչ իրավունք չունի կատարելու քաղաքացիական ծառայողը՝

- Անձամբ զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ:

(«ՔԾՄ» ՀՀ օրենք, հոդված 24)

Հարց 22

Եթե ծառայությունը կապված է միմյանց նկատմամբ անմիջական ենթակայության կամ վերահսկողության հետ նշվածներից ո՞ր ազգականի (խնամիությամբ կապված անձի) հետ է արգելվում քաղաքացիական ծառայողի համատեղ աշխատանքը՝

- Զավակի:

(«ՔԾՄ» ՀՀ օրենք, հոդված 24)

Հարց 23

Եթե ծառայությունը կապված է միմյանց նկատմամբ անմիջական ենթակայության կամ վերահսկողության հետ նշվածներից ո՞ր խնամիությամբ կապված անձի հետ է արգելվում քաղաքացիական ծառայողի համատեղ աշխատանքը՝

- Ամուսնու ծնողի:

(«ՔԾՄ» ՀՀ օրենք, հոդված 24)

Հարց 24

Նշվածներից ո՞ր դեպքում քաղաքացիական ծառայողը չպետք է կատարի հանձնարարականը՝

- Երբ այն կհանգեցնի քրեական պատասխանատվության:

(«ՔԾՄ» ՀՀ օրենք, հոդված 25)

Հարց 25

Հաստիքների կրճատման դեպքում աշխատանքային գործունեությունը շարունակելու նախապատվության իրավունքը նշվածներից ո՞ր քաղաքացիական ծառայողին է տրվում՝

- Ով ունի քաղաքացիական ծառայության առավել երկար ստաժ:

(«ՔԾՄ» ՀՀ օրենք, հոդված 29)

Հարց 26

ՀՀ Նախագահի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գլխավոր պաշտոնների 2-րդ ենթախմբի պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողների նկատմամբ ո՞վ է կիրառում օրենքով նախատեսված խրախուսանքները՝

- Աշխատակազմի ղեկավարը:

(«ՔԾՄ» ՀՀ օրենք, հոդված 31)

Հարց 27

Նշվածներից ո՞րն որպես կարգապահական տույժ կարող է կիրառվել քաղաքացիական ծառայողի նկատմամբ՝

- Նախազգուշացում:

(«ՔԾՄ» ՀՀ օրենք, հոդված 32)

Հարց 28

Կարգապահական տույժ նշանակելու մասին ի՞նչ ժամկետում է հաղորդվում քաղաքացիական ծառայողին՝

- Ոչ ուշ, քան կարգապահական տույժ նշանակելուց եռօրյա ժամկետում:

(«ՔԾՄ» ՀՀ օրենք, հոդված 32)

Հարց 29

Նշվածներից ո՞ր դեպքում է քաղաքացիական ծառայողը համարվում կարգապահական տույժի չենթարկված՝

- Երբ քաղաքացիական ծառայողը կարգապահական տույժ նշանակելու օրվանից մեկ տարվա ընթացքում նոր կարգապահական տույժի չի ենթարկվել:

(«ՔԾՄ» ՀՀ օրենք, հոդված 32)

Հարց 30

Ծառայողական քննություն անցկացնելու ընթացքում քաղաքացիական ծառայողի ծառայողական պարտականությունների կատարումը ի՞նչ ժամկետով կարող է կասեցվել՝

- Մինչև մեկ ամիս:

(«ՔԾՄ» ՀՀ օրենք, հոդված 32)

Հարց 31

Նշվածներից ո՞ր հիմքով քաղաքացիական ծառայողը կազատվի զբաղեցրած պաշտոնից՝

- Օրինական ուժի մեջ մտած՝ նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռը:

(«ՔԾՄ» ՀՀ օրենք, հոդված 33)

Հարց 32

Նշվածներից ո՞վ իրավունք չունի զբաղեցնել քաղաքացիական ծառայության պաշտոն՝

- 67 տարին լրացած հայերենին տիրապետող ՀՀ քաղաքացին:

(«ՔԾՄ» ՀՀ օրենք, հոդված 34)

Հարց 33

Նշվածներից ո՞րն է համարվում քաղաքացիական ծառայության ղեկավարման և կազմակերպման մարմին՝

- Աշխատակազմի ղեկավարը:

(«ՔԾՄ» ՀՀ օրենք, հոդված 36)

Հարց 34

Նշվածներից ո՞ր լիազորությունն է իրականացնում ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդը՝

- Դիմում է դատարան քաղաքացիական ծառայության մասին օրենսդրության պահանջներին հակասող ակտերը վերացնելու համար:

(«ՔԾՄ» ՀՀ օրենք, հոդված 37)

Հարց 35

Ո՞վ է կազմում քաղաքացիական ծառայության մասին ՀՀ օրենսդրության բնագավառին վերաբերող հարցաշարերը՝

- ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմը:

(«ՔԾՄ» ՀՀ օրենք, հոդված 14)

Հարց 36

Քաղաքացիական ծառայողի առաջին անգամ քաղաքացիական ծառայության պաշտոնում նշանակվելու պահից ի՞նչ ժամկետում է ձևակերպվում անձնական գործը՝

- 5-օրյա:

(ՀՀ ՔԾԽՈ 01.06.02 թ. N 14-Ն, կետ 10)

Հարց 37

Ո՞վ է վարում քաղաքացիական ծառայողների միասնական գրանցամատյանը՝

- ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդը:

(«ՔԾՄ» ՀՀ օրենք, հոդված 30)

Հարց 38

Ի՞նչ փուլերով է անցկացվում մրցույթը՝

- Թեստավորման և հարցազրույցի:

(«ՔԾՄ» ՀՀ օրենք, հոդված 14)

Հարց 39

Նշվածներից ո՞ր տվյալը պետք է պարունակի քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնի մրցույթ անցկացնելու հայտարարությունը՝

- Մրցույթն սկսելու օրը, ժամը և վայրը:

(ՀՀ ՔԾԽՈՒ 13.06.02 թ. N 17-Ն, կետ 14)

Հարց 40

Մրցույթի թեստային առաջադրանքների քանի՞ տոկոսը պետք է ընդգրկեն ՀՀ Սահմանադրության բնագավառի հարցերը՝

- 10 տոկոս:

(ՀՀ ՔԾԽՈՒ 13.06.02 թ. N 17-Ն, կետ 24)

Հարց 41

Ինչպե՞ս է գնահատվում մրցույթի թեստավորման արդյունքների յուրաքանչյուր սխալ պատասխանը՝

- 0 միավոր:

(ՀՀ ՔԾԽՈՒ 13.06.02 թ. N 17-Ն, կետ 48)

Հարց 42

Քաղաքացիական ծառայության առաջատար թափուր պաշտոնի համար անցկացվող մրցույթի մասնակիցը ե՞րբ չի անցնում մրցույթի հարցազրույցի փուլ՝

- Թեստավորման առաջադրանքների առնվազն 90 տոկոսին ճիշտ չպատասխանելու դեպքում:

(ՀՀ ՔԾԽՈՒ 13.06.02 թ. N 17-Ն, կետ 56)

Հարց 43

Ե՞րբ է հրապարակվում մրցույթի արդյունքները՝

- Մրցույթն անցկացնելուց հետո նույն օրը՝ անմիջապես:

(ՀՀ ՔԾԽՈՒ 13.06.02 թ. N 17-Ն, կետ 64)

Հարց 44

Ու՛մ է սահմանված կարգով ուղարկվում ՀՀ մարզպետարանի աշխատակազմի առաջատար թափուր պաշտոնի մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակիցների վերաբերյալ եզրակացությունը՝

- Աշխատակազմի ղեկավարին:

(ՀՀ ՔԾԽՈ 13.06.02 թ. N 17-Ն, կետ 67)

Հարց 45

Համապատասխան մարզպետը ՀՀ մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի թափուր պաշտոնի մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակիցների վերաբերյալ գրավոր բողոքի բացակայության դեպքում եզրակացությունը ստանալուց հետո նշվածներից ու՛մ է առաջարկություն ներկայացնում տվյալ պաշտոնում նշանակում կատարելու համար՝

- ՀՀ վարչապետին:

(ՀՀ ՔԾԽՈ 13.06.02 թ. N 17-Ն, կետ 67)

Հարց 46

ՀՀ վարչապետը ՀՀ կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմնի ղեկավարից ՀՀ կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմնի աշխատակազմի ղեկավարի թափուր պաշտոնի մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակիցներից մեկին պաշտոնում նշանակելու առաջարկությունն ստանալուց հետո ի՞նչ ժամկետում է տվյալ պաշտոնում նշանակում կատարում՝

- Մեկշաբաթյա:

(ՀՀ ՔԾԽՈ 13.06.02 թ. N 17-Ն, կետ 75)

Հարց 47

Ո՞վ է հրապարակում քաղաքացիական ծառայության բարձրագույն պաշտոններ զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի արդյունքները՝

- Մրցութային հանձնաժողովը:

(ՀՀ ՔԾԽՈ 13.06.02 թ. N 17-Ն, կետ 64)

Հարց 48

Եթե մրցույթի ընթացքում մրցութային հանձնաժողովի որևէ անդամի մասնակցությունը հանձնաժողովի հետագա աշխատանքներին դառնում է անհնար, ապա ի՞նչ կարգով է համալրվում այն՝

- Հանձնաժողովի կազմը չի համալրվում նոր անդամով:

(ՀՀ ՔԾԽՈ 14.06.02 թ. N 19-Ն, կետ 9)

Հարց 49

Նշվածներից ո՞ր դեպքն է համարվում ծառայողական քննության անցկացման հիմք՝

- Ծառայողական քննություն անցկացնելու մասին քաղաքացիական ծառայողի կողմից ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ գրավոր պահանջ ներկայացնելը:

(ՀՀ ՔԾԽՈ 22.11.02 թ. N 124-Ն, կետ 6)

Հարց 50

Նշվածներից ո՞րն է քաղաքացիական ծառայության կադրերի երկարաժամկետ ռեզերվում միանգամյա գտնվելու առավելագույն ժամկետը՝

- Մեկ տարին, բայց ոչ ավելի, քան անձի 65 տարին լրանալը:

(ՀՀ ՔԾԽՈ 17.06.03 թ. N 213-Ն, կետ 4)

Հարց 51

Նշվածներից ո՞ր հիմքով պաշտոնից ազատված քաղաքացիական ծառայող համարվող աշխատակազմերի ղեկավարներն են գրանցվում քաղաքացիական ծառայության կադրերի կարճաժամկետ ռեզերվում՝

- Պաշտոնավարման ժամկետը լրանալու:

(«ՔԾՄ» ՀՀ օրենք, հոդված 21)

Հարց 52

Նշվածներից ո՞րն է հիմք հանդիսանում քաղաքացիական ծառայողին քաղաքացիական ծառայության կադրերի կարճաժամկետ ռեզերվից հանելու համար՝

- Եթե նա կատարել է վճարովի ֆիզիկական աշխատանք:

(ՀՀ ՔՄԽՈ 17.06.03 թ. N 213-Ն, կետ 4)

Հարց 53

Նշվածներից ո՞րը հիմք չի հանդիսանում անձին քաղաքացիական ծառայության կադրերի երկարաժամկետ ռեզերվից հանելու համար՝

- Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար հայտարարված մրցույթին մասնակցելու դեպքում հաղթող չճանաչվելը:

(«ՔՄՄ» ՀՀ օրենք, հոդված 21)

Հարց 54

Նշվածներից ո՞րը հիմք չի հանդիսանում անձին քաղաքացիական ծառայության կադրերի երկարաժամկետ ռեզերվից հանելու համար՝

- Հայեցողական պաշտոնում նշանակվելը:

(«ՔՄՄ» ՀՀ օրենք, հոդված 21)
